Արձանագրություն N 2

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2017/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կենցաղային ապրանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

10 հուլիսի 2017 թ.
ժամը 15:00

Մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լևոն Հարությունյանը, անդամներ՝ Գագիկ Երեղյանը, Արթուր Եղիազարյանը, Միհրան Սարդարյանը, Արթուր Հայրապետյանը և քարտուղար՝ Սպարտակ Հարությունյանը:

Օրակարգ
Հայտերի բացման և ուսումնասիրմ ան մասին

ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2017/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լևոն Հարությունյանը նիստը հայտարարեց բացված: Հայտերի վերջնաժամկետին հայտ են ներկայացրել ներքոհիշյալ մասնակիցները

Հ/Հ	Մասնակցի անվանումը	
	«Մարինե 90» ՍՊԸ	«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ
	Գնային առաջարկ /ՀՀ դրամ առանց ԱԱՀ/	
	ԱԱՀ չվճարող	
1	99 640	-
2	669 000	639 000
3	-	-
4	-	1 118 000

Գնման գործընթացը կազմակերպվում է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա:

Հանձնաժողովը ուսումնասիրեց և արձանագրեց, որ՝

- հայտերում առկա են պահանջվող փաստաթղթերը, որոնք (բացառությամբ «Մարինե 90» ՍՊԸ-ի, որի հայտում վճարման պահանջագրի հայտի ապահովման գումարը չի ապահովում ներկայացրած գնային առաջարկի հինգ տոկոսը) կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Հանձնաժողովը քննարկեց և որոշեց հայտերի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում: Իրականացված գնահատման արդյունքում հանձնաժողովը որոշեց՝

«Մարինե 90» ՍՊԸ-ի հայտը մերժել:

«Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին՝

- ճանաչել որպես 1-ին տեղ զբաղեցրած մասնակից 2-րդ և 4-րդ չափաբաժինների մասով:

Հանձնաժողովը որոշեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցել և առաջարկել 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2017/2 ծածկագրով գնման հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով հարցում կատարել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2017/2 ծածկագրով գնման հրավերի «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ, ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող 3-րդ աշխատանքային օրը, ժամը 15:00-ին, ՀՀ ք. Երևան, Մ.Խորենացու-3 հասցեում:

Գնման ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած: 1-ին չափաբաժինը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, իսկ 3-րդ չափաբաժինը՝ "Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի

նախագահ _____ Լևոն Հարությունյան

անդամներ _____ Գագիկ Երեղյան

_____ Արթուր Եղիազարյան

_____ Միհրան Սարդարյան

_____ Արթուր Հայրապետյան

քարտուղար _____ Սպարտակ Հարությունյան